

երկ դաւ այսօր կ'ընէք ձեր մատադ կեան-
միրու մատազը, այդ անօր համար՝ վասնզի
ունիք տեսիլքը այս նկեղեցիի մեջ երախտ-
աւշեալներուն, եւ պարտականուրեան գի-
տակցուրիւնը հանդէս մեր հոգեկան ար-
ժեններուն, նշանակալ բեկորներուն եւ հան-
դէս այն ժազովուրդին որ մայքն ու ծնուցիչն
է այս բոլորին:

Այս է պատճառ, յանց Հոգ. Հայրը,
ու հակառակ մեր նիւրապատ, անեազ ու
անբոլիչ գարուն, գույք բարձունեներու, եր-
կրնեն, Ասունձոյ կը սեւեռէք ձեր հայուածքը,
եւ ձեր այս կեցուածքով սրբագրել կը փոր-
ձեք բարձակալիքը կոչուած մեր գարը, որ
այնքան փոքրած է սահմանները իր զարլու
և մասնելու իսկալին, ձեզ հասկնալ չկարե-
նալու ասիթիան:

Մայրեց աննոց Ասունձոյ սէր, անոր
մածումը, եւ պատկերը միւս իրենց նես ու-
նինալու, կեանիք այս բոհութոին մէջ եւ
մարդկային մեր սահմանափակ միջոցներուն
առջեւ: Ցուզունց որ ունինան ազգին սէրը,
որ Ասունձէ վերջ զերազոյն իրականուրիւնն
է նոյ եկեղեցականին, եւ ապա իրենց ան-
ձին պատրաստուրեան նոզը:

«Յետոյ, տառնանակեց, երբ կը բերկրինք
Ս. Սեղանին եւ Հոյ Եկեղեցոյ ընծայուած
այս կենցանի պատարազիկներով, չենք կըր-
նար չիտել այս բոլորին ծնունդ տուող հայ
ժողովուրդը որ արգասաւոր այգին է այս
ողիոզներուն, եւ հնձանը այս խանդավա-
ռուրեան: Ան որ մեր կարաղիկներն է կա-
ռուցեր բար առ բար, եւ զայն զարգաւեր իր
մասներուն հրաշեով, եւ չե խնայեր աննոց
իր արեան պարտքը, որուն կենցանի ալիք-
ներն են այս բեմին կեցած հարազաները:»
Յետոյ մայրեց որ սարիներ վերջ, անփորձ,
ընդունին սուրբ վեղարը նորին Ամենապա-
տուրեան արդար եւ մասուր ձեռներէն:

Նորբենայ սարկաւազները նոյն ժամուն
իսկ պատաւուել սկսան Ս. Պատրազին:

Ահա իրենց անունները.

ԿՈՍՏԱՆ ՄՐԿ. ՏԵՇ ՍՏԵՓԱՆՆԵԱՆ՝ ծնած
Տէօրթեօլ 1918ին, Գրզըլազանցի: Նախա-
կրթութիւնը ստացած է Գրզիսան: 1936ին
ընդունուած է ժառ. Վարժ. որուն ընթացքը
աւարտած է լաւագոյն յաջողութեամբ:

ՅՈՎՈՒՔ ՄՐԿ. ԵՐԻ ՑԵՍԱՆ՝ ծնած Տէօրթ-
եօլ Մարացի ծնողքէ, 1922ին, Նախակր-
թութիւնը ստացած է Պէլութ: 1936ին
ընդունուած ժառ. Վարժ. որուն ընթացքը
աւարտած է փայլուն յաջողութեամբ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄՐԿ. ՄԱՍԿՈՅԵԱՆ՝ ծնած
Տէօրթեօլ 1921ին, Զէյթունցի ծնողքէ,
Նախակրթութիւնը ստացած է Գրզիսան: 1935ին
ընդունուած ժառ. Վարժ. որուն ընթացքը
աւարտած է լաւագոյն յաջողութեամբ:

ՆՇԱՆ ՄՐԿ. ՎԱՐԴԵՆԵԱՆ՝ ծնած յԱղեք-
սանդրիք 1921ին, Շապին-Վարահիսարցի
ծնողքէ, Նախակրթութիւնը ստացած Գա-
հիքէ Գալատեան վարժարանին մէջ: 1936ին
ընդունուած ժառ. Վարժ. որուն ընթացքը
աւարտած է լաւագոյն յաջողութեամբ:

ՍՏԵՓԱՆ ՄՐԿ. ՏԱՐԱԳԴԵԱՆ՝ ծնած
Աթէնք 1922ին, Նախակրթութիւնը ստացած
է Կիպրոս: 1935ին ընդունուած է ժառ.
Վարժարան, որուն ընթացքը աւարտած է
լաւագոյն յաջողութեամբ:

ՆՇԱՆԻԿ ՄՐԿ. ՊԵՅԼԻԲԵԱՆ՝ ծնած
յԱտանա 1921ին, Կիսարացի ծնողքէ: Նա-
խակրթութիւնը ստացած յԱնտիոք: 1935ին
ընդունուած ժառ. Վարժ. որուն ընթացքը
աւարտած է փայլուն յաջողութեամբ:

«Սիոն», յանուն Միաբանուրեան կը
մալրէ որ ամենն ալ լինին «Մասկ առանց
ամօրոյ», ի ծառայուրիւն մեր նուրական
հաւատքին, սիրեցեալ ազգին եւ Ս. Արուոյ:

ՄԵԿԱՅԻՄ ԳԵՐ. Տ. ԱՐՏԱԿԱԶԴ Ս. ԱՐՔԵՊՈ. Ի

1 Սիամեմբերին Լիբանան վերադարձաւ
ԳԵՐ. Տ. ԱՐՏԱՎԱՋԴ Ս. ԱՐՔԵՊՈ. Միւրմենսը,
որ Ս. Զատիկի սօնակատարուրեանց առքիւ
Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն Ս. Արոն
հրաւիրուած էր իր մասնակցուրիւնը բերե-
լու սօնական արարողուրեանց, Ս. Պատրիարք
Հօր անհանգստուրեան պատճառաւ:

Մբազան հիւրը ուուրջ հինգ ամիսներ վա-
յելեց նորին Ամենապատուրեան եւ ամբողջ
Միաբանուրեան համակրանքը, զիսաւորեց
Եկեղեցական հանդիսուրիւնները եւ բանին
բարողուրեամբ միսիրարեց ժողովուրդը:

Իր ժամանակին մէկ կարեւոր մասր տուաւ
Զեռագրաց ուսումնասիրուրեան, զինք զբա-
զեցնող կարգ մը պատմական եւ բանասի-
րական հարցերու ուուրջ:

«Սիոն», յանուն Միաբանուրեան եւ իր
Պետին իր գոհունակուրիւնն ու ընորհակա-
լուրիւնը կը յայսնէ ԳԵՐ. Մբազանին իր օգ-
սակար եւ բարի օժանդակուրեանը համար: